# ՆՈՐ ՅԱՌԱՋ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ








horiZon | HÉBDOMADAIRE ARMÉNIEN – Supplément en français | ARMENIAN WEEKLY – English supplement

VOL. 42 / No.26-27 (2160-2161), 8+4+4+4+16 էջ / $1.75

23-30 ՆՈՅԵՄԲԵՐ /23-30 NOVEMBRE /23-30 NOVEMBER 2020


## ՀՅԴ Բիւրոյի Յայտարարութիւնը

2020 *թուականի նոյեմբերի 10-ին Հայաստանի Հանրապետութեան վարչապետ Նիկոլ Փաշինեանի կողմից պատերազմը դադարեցնելու մասին ստորագրուած յայտարարութիւնը ոչ այլ ինչ է, քան պարտուողական եւ նուաստացուցիչ մի փաստաթուղթ, որը ո՛չ միայն մեծագոյն յանցագործութիւն է հայրենիքի եւ ողջ հայ ազգի շահերի, իղձերի եւ նպատակների նկատմամբ, այլ, նաեւ, միանշանակօրէն վտանգում եւ ոտնահարում է հայ ժողովրդի ներկայ եւ գալիք սերունդների անկախ, անվտանգ եւ զարգացող երկրում ապրելու, եւ արժանապատիւ ապագայ կառուցելու բացարձակ իրաւունքը։*

*Հայաստանի եւ Արցախի ամբողջական անձնատուութեան (կապիտուլեացիայի) մասին դատապարտելի եւ անընդունելի այս փաստաթուղթն առաջացրել է հայ ժողովրդի ընդվզումն ու ցասումը, որի արդարացի պահանջը, կացութիւնը փրկելու նպատակով Նիկոլ Փաշինեանի անյապաղ հեռացումն է։*

*Համաժողովրդական ընդվզման խորապատկերին, պատասխանատուութիւնից խուսափելու, սեփական իշխանութիւնը երկարաձգելու եւ բռնի միջոցներով համաժողովրդական ընդվզումը լռեցնելու նպատակով, իշխող վարչախումբը սկսել է ձերբակալել ընդդիմադիր կուսակցութիւնների ղեկավարներին եւ այլ հանրային գործիչներին։*

*Խստօրէն դատապարտելով հակաօրինական ձերբակալութիւնները՝ վստահեցնում ենք, որ նման արարքներով անհնար է զսպել համաժողովրդական բողոքի եւ ցասման արդար ալիքը։*

*Միեւնոյն ժամանակ, կենսական ենք համարում, եռակողմ յայտարարութեամբ նախատեսուած քայլերի իրականացման շուրջ եւ առհասարակ Արցախի հիմնահարցի կարգաւորման յաջորդ փուլերի բանակցութիւններին՝ Հայաստանի եւ Արցախի Հանրապետութիւնների, ընդհանրապէս հայ ժողովրդի շահերը արժանաւոր կերպով պաշտպանելու հնարաւորութիւն ստեղծելու համար՝ վարչապետ Փաշինեանի հրաժարականը այդ պաշտօնից։*

*Վարչապետի հրաժարականը կը վկայի այն մասին, որ նա իր անձնական քաղաքական փառասիրութիւնը կը ստորադասի ազգային-պետական շահին։ Եթէ իսկապէս վարչապետը եռակողմ յայտարարութիւնը ստորագրել է հայրենիքի մնացորդացի փրկութեան նպատակով, նոյն տրամաբանութեամբ նա պիտի հեռանայ իր պաշտօնից՝ հնարաւորութիւն տալով քաղաքական դաշտին միաւորելու ազգային ամբողջ ներուժը եւ դուրս գալու այս իրավիճակից։*

*Զգուշացնում ենք վարչապետին՝ իր բռնութիւններով, հալածանքներով եւ սադրանքներով երկիրը չտանել ապակայունացման։ Կոչ ենք անում մեր ժողովրդին լինել զգօն եւ չտրուել սադրանքների։*

*Առնուազն ինքը՝ վարչապետը, շատ լաւ գիտի ՀՅ Դաշնակցութեան անսակարկ ու անմնացորդ նուիրումը հայրենիքին, պատերազմի առաջին իսկ ժամերից հէնց իրեն՝ վարչապետին յայտնած մեր պատրաստակամութիւնը՝ մեր միջեւ բոլոր տարաձայնութիւնները դէն դնելու եւ հայոց բանակին զինուորագրուելու Դաշնակցութեան ողջ կառոյցի յանձնառութիւնը եւ այդ պատրաստակամութիւնն ու յանձնառութիւնը հետագայ օրերին ռազմաճակատում եւ թիկունքի ներքին ու արտաքին հարթակներում իրագործելու փաստը։*

*Պատերազմի ամբողջ ընթացքին տարբեր առիթներով այդ մասին ասել ենք վարչապետին։*

*Վերջապէս, դիմում ենք աշխարհացրիւ մեր երիտասարդութեան չվհատելու, չհիասթափուելու եւ չյուսահատելու. մեր ազգային շահերի պաշտպանութեան համար մեր պայքարը արդար է, եւ յարատեւ պայքարով, թէկուզ երբեմն անյաջող, ի վերջոյ կը հասնենք մեր համազգային նպատակներին։*

ՀՅԴ ԲԻՒՐՈ

## Բազմահազար Հայորդիներ Մերժեցին Յանձնուողական Համաձայնագիրը Եւ Պահանջեցին Փաշինեանի Հրաժարականը



11 *նոյեմբերին Ազատութեան հրապարակին վրայ կազմակերպութեամբ* 17 *ընդդիմադիր կուսակցութիւններու խորհուրդին տեղի ունեցաւ բազմամարդ հանրահաւաք, որուն ընթացքին ընդդիմադիր կուսակցութիւններու ներկայացուցիչներն ու ներկաները պահանջեցին վարչապետ Նիկոլ Փաշինեանի հրաժարականը եւ ձեւակերպեցին իրենց պահանջները։*

*Կազմակերպող կուսակցութիւններն են՝ «Ազատութիւն», «Ազգային անվտանգութիւն», «Ազգային օրակարգ», «Ազգային ժողովրդավարական միութիւն», «Ազգային համաձայնութիւն», «Ալեանս առաջադիմական ցենտրիստական», «Բարգաւաճ Հայաստան», «Դեմոկրատական այլընտրանք», «Երկիր ծիրանի», «Հայ յեղափոխական դաշնակցութիւն», «Համերաշխութիւն», «Հայաստանի ժողովրդավարական ազատական միութիւն», «Հայաստանի Հանրապետական», «Հայաստանի քրիստոնեայ-դեմոկրատական միութիւն» «Հայրենիք», «Մէկ Հայաստան», «Սահմանադրական իրաւունք միութիւն» կուսակցութիւնները։*

*Հաւաքէն առաջ Հայաստանի ոստիկանութիւնը հրապարակած էր հաղորդագրութիւն մը, որուն մէջ նշած, որ երկրին մէջ տիրող ռազմական դրութեան պատճառով հաւաքները արգիլուած են։ Հանրահաւաքը տեղի ունեցաւ ինչպէս որ որոշուած էր՝ Ազատութեան հրապարակին վրայ։*

*Հաւաքէն բերման ենթարկուեցան* 129 *քաղաքացիներ, ինչպէս նաեւ հասարակական, քաղաքական եւ կուսակցական գործիչներ։*

*Ազատութեան հրապարակէն ցուցարարները քայլերթով ուղղուեցան դէպի կառավարութեան շէնք, ուրմէ ետք՝ Ազգային ժողով, ուր կրկին վանկարկեցին՝ «Նիկոլ, դաւաճան»։*

## Գանատայի Լաւալ քաղաքը ճանչցաւ Արցախի անկախութիւնը

*Գանատայի Քեպէգ նահանգի Լաւալ քաղաքի Նոյեմբեր 4-ին կայացած քաղաքապետական խորհուրդի նիստի ընթացքին, քաղաքապետական խորհուրդը միաձայնութեամբ վաւերացուց յատուկ բանաձեւ, որ կը ճանչնայ Արցախի անկախութիւնը։ Բանաձեւի գլխաւոր կէտով խորհուրդը կը ճանչնայ Արցախի ժողովուրդի ինքնորոշման իրաւունքը։*

*Բանաձեւին մէջ կը դատապարտուի Արցախի դէմ ուղղուած թուրք-ատրպէյճանական ռազմական յարձակումը եւ կոչ կ՚ուղղուի Գանատայի դաշնակցային կառավարութեան եւ Քեպէգ նահանգի կառավարութեան, որպէսզի սատարեն Արցախի հակամարտութեան գծով միջազգային մարդասիրական օրէնքներու գործադրման։*





Al★Nejmah
MIDDLE EASTERN SUPERMARKET
NOW OPEN
Սեփականատէր
Յարութ Սիփան
Ընտանեկան բացառիկ գործառնութիւն
ուր կը գտնէք ձեր բոլոր կարիքները
ուտելիքներու վերաբերեալ
IN HOUSE
COFFEE ROASTING & GRINDING
ROASTING FRESH NUTS
SESAME GRINDING TO MAKE FRESH TAHINA
TANOOR BREAD & IRAQI SAMOON
Սուրճ աղալ եւ խարկել
Հնտեղէն աղալ օրական դրութեամբ
Շուշմայ աղալ եւ թահինի պատրաստել
Թոնիրի հաց եւ իրաքեան սոմուն
Supermarket | Restaurantl I Bakery I Halal Butcher
Վաճառատուն, ճաշարան, փուռ, մսավաճառ
PHONE: 289.232.1200
3085 Hurontario St, Unit 1-6, Mississauga

# 17 քաղաքական կուսակցութիւններ կը պահանջեն վարչապետին հեռացումը

Հայ ժողովուրդը, խորհրդարանական եւ արտախորհրդարանական քաղաքական ուժեր, մեկտեղել են իրենց կարողականութիւնը՝ դիմագրաւելու հայկական երկու պետութիւններին ուղղուած Թուրք-ադրբեջանական ագրեսիան։

Պատերազմական այս օրերին քաղաքական, դիւանագիտական եւ ռազմական ճակատներում բեկում մտցնելու յորդորով իշխանութիւններին ենք ներկայացրել բազմաթիւ առաջարկութիւններ, այդ թւում իրավիճակի շտկմանն ուղղուած հանդիպումների առաջարկներ, որոնք մնացել են անպատասխան եւ չիրագործուած։

Պատերազմը սաստիկ է, կորուստներն՝ անդառնալի եւ ծանր։ Որպէս պետութիւն եւ ժողովուրդ կանգնած ենք ճակատագրական հանգրուանի առջեւ, որը պահանջում է վճռական գործողութիւններ։ Մինչդեռ, քաղաքական իշխանութիւնների ձեռնարկած քայլերը համարժէք չեն մեր ժողովրդին ուղղուած գոյապահպանական սպառնալիքին։

Այս ընթացքում իշխանութիւնն ի ցոյց դրեց իր բացայայտ անկարողութիւնը, ներքին եւ արտաքին մարտահրաւէրները դիմակայելու անընդունակութիւնը։ Մարդկային եւ տարածքային կորուստները, Հայաստանի դաշնակիցների եւ առաջին հերթին Ռուսաստանի Դաշնութեան հետ ոչ լիարժէք յարաբերութիւններն ակնյայտ են դարձնում գործող իշխանութեան սնանկութիւնը։

Այս իրավիճակի ողջ պատասխանատուութիւնը կրում են քաղաքական իշխանութիւնները, որոնք չձերբազատուեցին անսխալականութեան իրենց բարդոյթից՝ հայկական երկու պետութիւնները կանգնեցնելով ծանր իրողութիւնների, իսկ Արցախը՝ նաեւ տարածքային լրջագոյն կորուստների առջեւ։ Ուստի, իշխանութիւնները զրկուել են հայ ժողովրդին ներկայացնելու քաղաքական եւ բարոյական հիմքերից։

Անդառնալի կորուստները կանխելու համար, պահանջում ենք՝

***– ստեղծուած աղետալի վիճակի համար պատասխանատու վարչապետ Փաշինեանի եւ նրա կառավարութեան ժամ առաջ, ինքնակամ եւ անցնցում հեռացումը,***

***– իրավիճակում բեկում մտցնելու կարողութիւն ունեցող եւ ռազմաքաղաքական խնդիրներ լուծող գործադիր իշխանութեան նոր մարմնի հրատապ ստեղծումը։***

Սիրելի հայրենակիցներ,

օրհասական այս պահին մեր պահանջը թելադրուած է հայկական երկու պետութիւնների լինելիութեան հրամայականով եւ այն վստահութեամբ, որ նոր իրավիճակում հայոց անկոտրում բանակն ու միասնական հայ ժողովուրդն ի զօրու են յաղթական ճեղքում ապահովել ռազմաճակատում։

«Ազատութիւն» կուսակցութիւն
«Ազգային անվտանգութիւն» կուսակցութիւն
«Ազգային օրակարգ» կուսակցութիւն
«Ազգային ժողովրդավարական միութիւն» կուսակցութիւն
«Ազգային համաձայնութիւն» կուսակցութիւն
«Ալեանս առաջադիմական ցենտրիստական» կուսակցութիւն
«Բարգաւաճ Հայաստան» կուսակցութիւն
«Դեմոկրատական այլընտրանք» կուսակցութիւն
«Երկիր Ծիրանի» կուսակցութիւն
«Հայ Յեղափոխական Դաշնակցութիւն» կուսակցութիւն
«Համերաշխութիւն» կուսակցութիւն
«Հայաստանի ժողովրդավարական ազատական միութիւն» կուսակցութիւն
«Հայաստանի Հանրապետական» կուսակցութիւն
«Հայաստանի քրիստոնեայ-դեմոկրատական միութիւն» կուսակցութիւն
«Հայրենիք» կուսակցութիւն
«Մեկ Հայաստան» կուսակցութիւն
«Սահմանադրական իրաւունք միութիւն» կուսակցութիւն
09.10.2020 *թ.*

# Յակոբ Տէր Խաչատուրեանի Յորդորը ՀՀ Վարչապետին. Անցնցում Հեռացէք Բեմէն

Հայ աշխարհը սահմռկեցուցիչ ցնցումի մէջ է։

Բացայայտուած է այն ահաւոր համաձայնագիրը, որ գաղտնի բանակցութիւներէ ետք միանձնեայ պատասխանատուութեամբ ստորագրած է ՀՀ վարչապետը թշնամիին թողելով անոր յափշտակած Արցախեան հողատարածքները. միաժամանակ խոստացած է յանձնել այլ շրջաններ եւս եւ ընդունած է թշնամիին մնացեալ բոլոր նուաստացուցիչ պայմանները։ Կացութիւն մը, որու նախերգանքը կը զգացուէր օրեր առաջ. այդ պատճառով ալ ընդդիմադիր կուսակցութիւնները կոչ կ'ընէին պրն. Փաշինեանին ինքնակամ հեռանալու իր պաշտօնէն ու չստորագրելու հայ ժողովուրդը նուաստացնող որեւէ փաստաթուղթ, որպէսզի յուսալքուած անձնատուութեան մէկ պահուն հայութեան 30 տարիներու ձեռքբերումներու կարեւոր մասը չզիջուէր թշնամիին։

Բնականաբար կարելի չէ չխոնարհիլ նահատակ հայ զինուորին ու կամաւորին սուրբ յիշատակին առջեւ ու չփառաբանել նուիրումը քաջարի հայ մարտիկին, որ կը շարունակէ իր կեանքի գնով պաշտպանել հայրենի սահմանները։

Պատահածը սակայն պարզապէս թէ' անընդունելի ինքնանէացում է եւ թէ' ազգային աղէտ։

Կ'ակնկալուէր անշուշտ, որ ՀՀ վարչապետը իր այդ քայլին համար խոնարհաբար հայցէր հայ ժողովուրդի ներողամտութիւնը, փորձէր յանցանքն ընդունելով փակել Արցախի գոյամարտի մեծագոյն պարտութեան էջը եւ ժողովուրդին ու պատմութեան դատաստանին յանձնէր ճակատագիրը այն սխալ քայլերուն, որոնք մեզ հասցուցին այս ողբերգութեան։

Բայց փոխան զղջումի պրն. Փաշինեանը նախընտրեց ամէն գնով կառչած մնալ իր աթոռին եւ ամէնուրէք տեսնել մեղաւորներ բացի ինքնիրմէ. նախընտրեց բորբոքել կիրքերը. ինքնարդարացումի յուսահատ ճիգով նոյնիսկ չվարանեցաւ քաղաքացիական ընդհարումներու առաջնորդել ժողովուրդը։ Եւ իշխանութենէն լռելեայն հեռանալու փոխարէն պատերազմ յայտարարեց իր ներքին «թշնամիներուն» դէմ. կրկին ու կրկին բաժանում, թոյն, քինախնդրութիւն ու ատելութիւն սերմանեց. որպէսզի այդ «թշնամիներու» բացայայտումով մոլորեցնէ ժողովուրդը ու շեղէ անոր ուշադրութիւնը ահռելի իրողութենէն։

Պրն. վարչապետ, ժողովուրդին ու հայրենիքին սիրոյն վերջ տուէք այս անընդունելի կացութեան։ Գերադասեցէք ազգային շահերը ձեր անձնական շահերէն եւ անցնցում հեռացէք բեմէն։

ՅԱԿՈԲ ՏԷՐ ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ
ՀՅԴ Բիւրոյի ներկայացուցիչ































## *ԽՄԲԱԳՐԱԿԱՆ*

# Ազգակործան Համաձայնագրի որոգայթները

«Ապագան վտանգուած ժողովուրդների վերջին խաղաթուղթը՝ վերադաստիարակութիւնն է»
Գարեգին Նժդեհ

*Հայաստանի վարչապետին կողմէ ստորագրուած անձնատուողական ու ազգակործան համաձայնագրին որոգայթներուն խորքը դրոշմուած կը մնայ այն յստակ հարցը՝ թէ ինչպէս 40 օրուան մէջ կորսնցուցինք 40 տարուան ընթացքին ձեռքբերուածն ու արեան գնով շահուածը: Հիմնովին սասանած է յաղթողի մեր հայկեան հոգեկերտուածքը:*

*Հայոց Ցեղասպանութենէն ետք, Հայ ժողովուրդի պատմագրութեան ամէնէն մթագնուած, դաժան ու գորշ էջերէն մէկը հանդիսացող Նոյեմբեր 9-ի համաձայնագրով, Հայաստանի ու Արցախի գոյատեւելիութիւնը կը դրուի անդառնալի սպառնալիքի տակ: Վերոնշեալ համաձայնագրով խախտած են Արցախի Հանրապետութեան սահմաններու ռազմական անվտանգութեան հիմնարար բոլոր բաղադրիչները, իսկ Հայաստանի պարագային՝ իր հարաւային սահմանագուտը այս ձեւով կը դրուի երկարժամկէտ սպառնալիքի ներքոյ: Հայաստանի Արեւելից կողմանց միջնաբերդ ու պատուար Արցախը՝ համաձայնագրի գործադրման պարագային, աշխարհագրականօրէն կը նօսրանայ ու համընդհանուր պաշարման կ՚ենթարկուի թշնամիին կողմէ:*

*Յուլիս 2020ին հրապարակուած Հայաստանի Հանրապետութեան Ազգային Անվտանգութեան Ռազմավարութեան հայեցակարգին մէջ կը շեշտադրուի, որ Հայաստանի անվտանգութեան սպառնալիք է Ատրպէյճանի ռազմատենչ եւ յարձակողապաշտ քաղաքականութիւնը, Հայաստանի եւ Արցախի Հանրապետութեանց դէմ ռազմական յարձակումի հաւանականութիւնը, ինչպէս նաեւ Թուրքիոյ ուղղակի կամ անուղղակի ներգրաւուածութիւնը հաւանական առճակատման:*

*Հայաստանի Հանրապետութեան Ազգային Անվտանգութեան Ռազմավարութեան մէջ տեղ գտած երկու կարեւոր բաղադրիչներ այս պատերազմին չեն իրագործուած. Վերոնշեալ փաստաթուղթի «Ռազմական սպառնալիքների զսպում եւ չէզոքացում» ենթաբաժնով նշուած՝ թիւ 4:16 կէտով՝ «Որպէս Արցախի անվտանգութեան երաշխաւոր՝ Հայաստանի Հանրապետութիւնն իր պաշտպանական քաղաքականութիւնն ուղղում է նաեւ Արցախի անվտանգութեան ապահովմանը»:*

*Եւ նոյն ենթաբաժնի 4:17 կէտով՝*

*«Տարածաշրջանային անվտանգութեանը սպառնացող խնդիրները խաղաղ ճանապարհով լուծելու եւ Հայաստանի Հանրապետութեան ու Արցախի դէմ հնարաւոր ագրեսիան զսպելու հրամայականը մեզնից պահանջում է ռազմաքաղաքական սպառնալիքներին դիմագրաւող արդիւնաւէտ պաշտպանա-անվտանգային համակարգի ձեւաւորում»:*

*Հայաստանի Հանրապետութեան ներկայ իշխանութիւնները, իրենց հետեւողական ձախող քաղաքականութեամբ, ազգն ու պետութիւնը ռազմաքաղաքական անհարկի տեղատուութեան առաջնորդած են: Նման պարագաներու, պատերազմը կորսնցուցած որեւէ պետութեան գործող իշխանութիւններու կամ ղեկավարի այլընտրանքը՝ կամովին հրաժարական ներկայացնելն է եւ քաղաքական բեմէն անցնցում հեռանալն է: Նոյնն է պարագան Հայաստանի այսօրուան իշխանութեանց, որոնք անցնող երկու տարիներու ընթացքին ստորադասեցին ազգային ու պետական շահերը: Ժամանակն է, որ իշխող վարչախումբը ողջախոհութիւնը ունենայ հրաժարելու եւ ճանապարհ բանայ, որպէսզի խոցուած ու բեկուած հայրենիքը հունաւորէ վերականգնման նոր ուղի:*

*Համաժողովրդային ցասումը արդար է: Ձերբակալութիւնները, հալածանքները, անհանդուրժողութեան հրահրումն ու սերմանումը միայն կ՚առաջնորդեն ազգակործանման: Ատելավառութիւնն ու տարամերժութիւնը միայն կ՚առաջնորդեն ազգային հաւաքական ներուժի ջլատման, հասարակութեան խաւերու միջեւ սուր բեւեռացման, որմէ կրնայ օգտուիլ միա՛յն մեր հայրենիքի թշնամին:*

*Պահն է ազգային նոր դաւանանք կերտելու: Պահն է Հայաստանի ու աշխարհասփիւռ հայութեամբ մէ՛կ ազգային գաղափարախօսութիւն դաւանող միաձոյլ ազգ կերտելու ու անհանդուրժողութեան ժամանակներէն ետք՝ միասնութիւնը կամովին հաստատագրելու: Պահն է միասնաբար ու համերաշխութեամբ՝ մեր դէմ ծառացած պատմութեան այս նոր մարտահրաւէրը դիմագրաւելու:*

# Հայաստանի Վարչապետ Նիկոլ Փաշինեան Ազրպէյճանի Հետ Ստորագրեց Յանձնուողական Համաձայնագիրը

*Նոյեմբեր 9-ին, Արցախի մէջ բոլոր ռազմաճակատներուն վրայ շարունակուեցան բուռն բախումները հայկական զինեալ ուժերուն եւ ազրպէյճանական նախայարձակ բանակին ու ահաբեկչական վարձկաններուն միջեւ: Առաւել բուռն բախումներ տեղի ունեցան Բերձորի, Շուշիի եւ Մարտունիի ուղղութիւններով: Ամբողջ օրուան ընթացքին Արցախի պաշտպանութեան բանակի զինուորները եւ կամաւորական վաշտերը բուռն դիմադրական կռիւներ մղեցին Շուշիի եւ անոր մերձակայքին մէջ:*

*Ուշ երեկոյեան Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեան յայտարարեց, որ Ռուսիոյ նախագահ Վլատիմիր Փութինի եւ Ազրպէյճանի նախագահ Իլհամ Ալիեւի հետ ստորագրած է պատերազմի դադրեցման համաձայնագիրը (տեսնել լուրին վերջաւորութեան):*

*Կէս գիշերէն ետք Հայաստանի քաղաքացիներ ինքնաբուխ բողոքի ցոյցերով Երեւանի մէջ Հանրապետութեան հրապարակին վրայ իրենց ընդվզումը արտայայտեցին պարտուողական այս համաձայնագիրի ստորագրութեան դէմ:*

*Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեան դիմատետրի իր էջով գրեց, որ Ռուսիոյ եւ Ազրպէյճանի նախագահներուն հետ ղարաբաղեան պատերազմը ժամը 1:00-էն սկսեալ դադրեցնելու մասին յայտարարութիւն ստորագրած է:*

*Վարչապետը գրեց.*

*«Սիրելի՛ հայրենակիցներ, քոյրեր եւ եղբայրներ. անձամբ իմ եւ բոլորիս համար ծանր, չափազանց ծանր որոշում եմ կայացրել:*

*Ռուսաստանի եւ Ազրպէյճանի նախագահների հետ ղարաբաղեան պատերազմը ժամը 1:00-ից դադարեցնելու մասին յայտարարութիւն եմ ստորագրել: Յայտարարութեան բնագիրը, որ արդէն հրապարակուել է, անասելի ցաւոտ է անձամբ ինձ եւ մեր ժողովրդի համար:*

*Այդ որոշումը կայացրել եմ ռազմական իրադրութեան խորը վերլուծութեան եւ այդ իրադրութեանը ամենալաւը տիրապետող մարդկանց գնահատականի արդիւնքում: Նաեւ հիմնուելով այն համոզմունքի վրայ, որ ստեղծուած իրավիճակում սա ՀՆԱՐԱՒՈՐ ամենալաւ հանգուցալուծումն է: Այս ամէնի մասին յառաջիկայ օրերին հանդէս կը գամ մանրամասն ուղերձով:*

*Սա յաղթանակ չէ, բայց չկայ պարտութիւն, քանի դեռ ինքդ քեզ պարտուած չես ճանաչել: Մենք մեզ երբեք պարտուած չենք ճանաչի եւ սա պէտք է դառնայ մեր ազգային համախմբման, վերածննդի դարաշրջանի մեկնարկ:*

*Մենք պէտք է վերլուծենք մեր անկախութեան տարիները, մեր ապագան ծրագրաւորելու եւ անցեալի սխալները չկրկնելու համար:*

*Ծնկի եմ իջնում մեր բոլոր նահատակների առաջ: Խոնարհւում եմ մեր բոլոր այն զինուորների, սպաների, զօրավարների, կամաւորների առաջ, ովքեր իրենց կեանքով են պաշտպանել ու պաշտպանում հայրենիքը: Նրանք իրենց անձնուրացութեամբ փրկել են արցախահայութեանը:*

*Մենք պայքարեցինք մինչեւ վերջ: Եւ մենք յաղթելու ենք: Արցախը կանգուն է:*

*Կեցցէ՛ Հայաստանը: Կեցցէ՛ Արցախը»:*

*Արցախի Հանրապետութեան Նախագահ Արայիկ Յարութիւնեան դիմատետրի իր էջին վրայ կատարեց հետեւեալ գրառումը.*

*«Սիրելի՛ հայրենակիցներ,*

*Այսօր ամբողջ օրը Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեանի հետ քննարկել ենք պատերազմական գործողութիւնների դադարեցմանն ուղղուած մեր անելիքները: Նախօրօք քննարկումներ եմ ունեցել նաեւ Արցախի Հանրապետութեան Ազգային ժողովի հետ եւ ստացել պատգամաւորների գերակշիռ մեծամասնութեան համաձայնութիւնը: Հաշուի առնելով ներկայ ծանրագոյն վիճակը եւ խուսափելու համար հետագայ մարդկային մեծաքանակ կորուստներից եւ Արցախն ամբողջութեամբ կորցնելուց՝ ես տուել եմ իմ համաձայնութիւնը ժամ առաջ դադարեցնելու պատերազմը: Ինչ վերաբերում է ստորագրուած եռակողմ յայտարարութեանը, ապա դրա վերաբերեալ մանրամասնօրէն հանդէս կը գամ աւելի ուշ:*

*Իմ խորին ցաւակցութիւններն ու հպարտութիւնն եմ յղում մեր նահատակների հարազատներին ու ողջ ժողովրդին: Մենք դեռ ժամանակ կ՚ունենանք զոհուած հերոսների հարազատների ու մեր զինուորականների հետ երկխօսութիւն ունենալ մեր անելիքների շուրջ: Խոնարհումս բոլոր այն անձանց, ովքեր իրենց փոքրիկ լուման անգամ ներդրեցին հայրենիքի պաշտպանութեան ծանր գործում»:*

*Ստորագրուած Համաձայնագիրի*

*Բնագիրը*

Յայտարարութիւն՝ Ազրպէյճանի Հանրապետութեան նախագահի, Հայաստանի Հանրապետութեան վարչապետ եւ Ռուսաստանի Դաշնութեան նախագահի

Մենք՝ Ազրպէյճանի Հանրապետութեան նախագահ Ի. Հ. Ալիեւը, Հայաստանի Հանրապետութեան վարչապետ Նիկոլայ Փաշինեանը եւ Ռուսաստանի Դաշնութեան նախագահ Վլատիմիր Փութինը յայտարարեցին հետեւեալը.

1. Լեռնային Ղարաբաղի հակամարտութեան գօտում յայտարարւում է ամբողջական հրադադարի դրութեան եւ բոլոր ռազմական գործողութիւնների դադար 2020 թուականի նոյեմբերի 10-ի՝ Մոսկուայի ժամանակով 00:00-ից: Ազրպէյճանի Հանրապետութիւնը եւ Հայաստանի Հանրապետութիւնը, այսուհետ՝ կողմեր, կանգ են առնում իրենց դիրքերում:

2. Աղտամի շրջանը եւ Ազրպէյճանի Հանրապետութեան Ղազախի շրջանում հայկական կողմից պահուող տարածքները վերադարձւում են ազրպէյճանական կողմին մինչեւ 2020 թ. նոյեմբերի 20-ը:

3. Լեռնային Ղարաբաղի շփման գծի եւ Լաչինի միջանցքի երկայնքով տեղակայուելու է Ռուսաստանի Դաշնութեան խաղաղապահ զօրակազմը՝ 1960 փոքր զինատեսակներով, 90 զրահամեքենաներով, 380 միաւոր ինքնաշարժներով եւ յատուկ մեքենաներով զինծառայողներ:

4. Ռուսաստանի Դաշնութեան խաղաղապահ զօրակազմի տեղակայումը կատարուելու է Հայաստանի զինուած ուժերի դուրսբերմանը զուգահեռ: Ռուսաստանի Դաշնութեան խաղաղապահ զօրամիաւորման մնալու տեւողութիւնը 5 տարի է՝ յաջորդ 5-ամեայ ժամանակահատուածների համար ինքնաբերաբար երկարաձգմամբ, եթէ կողմերից ոչ մէկը չի յայտարարում սոյն դրոյթի կիրառումը դադարեցնելու մտադրութեան մասին, ժամկէտի լրանալուց 6 ամիս առաջ:

5. Հակամարտութեան կողմերի կողմից համաձայնագրերի կատարման վերահսկողութեան արդիւնաւէտութիւնը բարձրացնելու նպատակով հրադադարի դրութիւնը վերահսկելու համար տեղակայւում է խաղաղապահ կեդրոն:

6. Հայաստանի Հանրապետութիւնը Քելբաջարի շրջանը կը վերադարձնի Ազրպէյճանի Հանրապետութեանը մինչեւ 2020 թ. նոյեմբերի 15-ը, իսկ Լաչինի շրջանը մինչեւ 2020 թ. դեկտեմբերի 1-ը ՝ թողնելով Լաչինի միջանցքը (5 քմ լայնութեամբ), ինչը կ՚ապահովի Լեռնային Ղարաբաղի կապը Հայաստանի հետ եւ միեւնոյն ժամանակ չի վերաբերի Շուշի քաղաքին: Կողմերի համաձայնութեամբ, յառաջիկայ երեք տարիներին որոշուելու է Լաչինի միջանցքի երկայնքով երթեւեկի նոր երթուղու կառուցման ծրագիրը, որն ապահովում է կապը Ստեփանակերտի եւ Հայաստանի միջեւ, հետագայում այդ խաղաղ ճանապարհը պաշտպանելու համար ռուսական խաղաղապահ զօրախմբի վերաբաշխմամբ: Ազրպէյճանի Հանրապետութիւնը երաշխաւորում է Լաչինի միջանցքի երկայնքով երթեւեկի անվտանգութիւնը երկու ուղղութիւններով քաղաքացիների, փոխադրական միջոցների եւ ապրանքների համար:

7. Ներքին տեղահանուած անձինք եւ փախստականները վերադառնում են Լեռնային Ղարաբաղի տարածք եւ յարակից տարածքներ ՄԱԿ-ի փախստականների հարցերով գերագոյն յանձնակատարի գրասենեակի վերահսկողութեան տակ:

8. Իրականացւում է ռազմագերիների եւ այլ ձերբակալուածների եւ մահացածների մարմինների փոխանակում:

9. Տարածաշրջանում բոլոր տնտեսական եւ փոխադրական կապերն ապաշրջափակուած են: Հայաստանի Հանրապետութիւնն ապահովում է փոխադրական կապեր Ազրպէյճանի Հանրապետութեան արեւմտեան շրջանների եւ Նախիջեւանի Ինքնավար Հանրապետութեան միջեւ՝ երկու ուղղութիւններով քաղաքացիների, փոխադրական միջոցների եւ ապրանքների անխոչընդոտ տեղաշարժը կազմակերպելու նպատակով: Փոխադրական հսկողութիւնն իրականացնում են Ռուսաստանի Դաշնութեան ԱԴՏ Սահմանապահ ծառայութեան մարմինները: Կողմերի համաձայնութեամբ կը տրամադրուի Նախիջեւանի Ինքնավար Հանրապետութիւնը Ազրպէյճանի արեւմտեան շրջանների հետ կապող նոր փոխադրական հաղորդակցութիւնների կառուցում:

2020 թուականի նոյեմբեր

*ՆԱԽԱԳԱՀ ԱԶՐՊԷՅՃԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ*
*ՎԱՐՉԱՊԵՏ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ*

horiZon
ARMENIAN WEEKLY
VOL. 26 No. 26-27 (1307-1308) NOVEMBER 23-30, 2020

# Aram I calls for unity

His Holiness Aram I, Catholicos of the Great House of Cilicia, in an address to all Armenians called for unity.

"Now it's a crucial moment in the modern history of our homeland and people. Our courageous army heroically resisted the Turkish-Azerbaijani-terrorist army. Respect and honor to all our fallen heroes. The war is not over. We need to be vigilant and realistic. Now, and in the future, the people and statehood of Armenia and Artsakh are threatened," said Catholicos Aram I in a video message posted on Facebook on November 14.

Aram I said that the Armenian people must confront the current crisis facing the Armenian people through unity and common sense. He also emphasized that the will of the people must remain a priority at all times.

# ARF Bureau statement addresses Trilateral Agreement

The ARF World Bureau issued the following statement:

The statement signed by the Prime Minister of the Republic of Armenia Nikol Pashinyan on November 10, 2020 to end the war is nothing but a defeatist and humiliating document. It is not only a great crime against the interests, desires and goals of the homeland and the entire Armenian nation, but it also unequivocally endangers and violates the absolute right of future generations of the Armenian people to live in an independent, secure and developing country and to build a dignified future.

This reprehensible and unacceptable document on the complete surrender (capitulation) of Armenia and Artsakh has infuriated and angered the Armenian people whose just demand, in order to salvage the situation, is for Nikol Pashinyan to leave without incident.

In the wake of the popular uprising, the ruling regime has begun arresting opposition party leaders and other public figures in order to evade responsibility, extend its rule and silence the people by force. We strongly condemn the illegal arrests and stress that with such actions it is impossible to curb a just wave of popular protest and anger.

At the same time, we consider the resignation of Prime Minister Pashinyan vital for the implementation of the steps envisioned by the trilateral statement and the negotiations on the next stages of the settlement of the Artsakh conflict in general, in order to create an opportunity to defend the interests of the republics of Armenia and Artsakh and the Armenian people in a worthy manner.

The Prime Minister's resignation will signal that he places national interests above his personal political ambitions. If the Prime Minister truly signed the tripartite statement in order to save the remnants of the Homeland, by the same logic he should resign to allow political forces to unify our national potential and emerge from this situation. We caution the Prime Minister not to destabilize the country with his violence, persecution and provocations. We call on our people to be vigilant and not to give in to provocations.

At the very least, the Prime Minister himself knows full well the Armenian Revolutionary Federation (ARF)'s unconditional and unwavering devotion to the Homeland. From the first moments of the war we personally expressed to the Prime Minister our willingness to put aside all our differences and the ARF's readiness to enlist, with its entire structure, in the Armenian Army. In the days that followed, that willingness and responsibility were proven on the battlefield and on the sidelines on internal and external fronts. We conveyed this to the Prime Minister on several occasions during the entire duration of the war.

Finally, we call on our youth around the world not to despair, not to be disappointed and not to discouraged. Our commitment to defend our national interests is unwavering. Through our unrelenting struggle, albeit sometimes unsuccessful, we will finally achieve our national aspirations.

**ARMENIAN REVOLUTIONARY FEDERATION BUREAU**

*November 12, 2020*

# FM Zohrab Mnatsakanyan resigns

YEREVAN—Armenia's Foreign Minister Zohrab Mnatsakanyan has tendered his resignation, the foreign ministry spokesperson Anna Naghdalyan said, posting a photo of the letter addressed to Prime Minister Nikol Pashinyan.

Prime Minister Nikol Pashinyan rushed to say in parliament on November 16 that it was his decision to dismiss Mnatsakanyan from office.

President Armen Sarkissian signed a decree relieving Mnatsakanyan from his post.

Mnatsakanyan, a career diplomat and Armenia's former Ambassador to the United Nations, was appointed foreign minister after the 2018 popular movement brought Pashinyan to power.

# Government's resignation and snap elections are inevitable, says President Armen Sarkissian

YEREVAN — In an address to the nation on November 16, Armenia's President Armen Sarkissian outlined the current situation in Armenia and Artsakh and concluded that snap parliamentary elections and the government's resignation were inevitable, if Armenia is to emerge from the current crisis.

The president said that during the past several days he had held consultations with political forces and pubic figures, as well as leaders of the Diaspora, the overwhelming majority of whom agree that a change in government, pursuant to the Constitution, would provide a dignified way out of the impasse.

He urged the government and the ruling party to assess their own internal capacity and to immediately propose a "roadmap" to snap elections, which will be overseen and managed by an interim "National Accord Government" made up of what he called, "highly qualified" individuals.

Below is the translated text of President Sarkissian's address to the nation:

My fellow Armenians in Armenia, Artsakh and the Diaspora:

Armenians all over the world are currently experiencing one of the most critical turning points in the millennia-old history of our nation.

The goals, which were striving for after our nation's great independence, have been jostled.

We lost the war that was imposed on us, both on the battlefield, as well as in the diplomatic and the international arena.

I once again offer my condolences to the families and relatives of the martyred and wish the injured a speedy recovery.

We are the children of a nation that survived the Genocide and overcame it.

A battle may be lost, but we cannot lose as a nation.

It is possible to lose a battler, but it is unacceptable to lose as a nation.

We can restore a house that we burned down with our hands and a lost homeland only by recovering our victory and build that state, with which we will all be truly proud.

And we can do it with confidence, by rationally assessing the situation, learning from the mistakes that were made, and immerse ourselves with unity to revive our nation.

Whatever the differences in our assessments of the past, it is clear that we are facing unprecedented problems.

Artsakh has been seriously wounded.

We have a society in turmoil.

Our troubled economy is weighed down by huge social issues.

The large exodus of people from Artsakh to

*Continued on page* **E2**

# ANCC urges PM to recognize Artsakh and ban all arms sales to Turkey and Azerbaijan

OTTAWA — On November 13, 2020, the Armenian National Committee of Canada (ANCC) issued a letter to the Prime Minister of Canada, the Rt. Hon. Justin Trudeau, regarding the latest developments in Artsakh and to express the Armenian-Canadian community's collective outrage regarding the destructive use of Canadian technology by Azerbaijan.

In the letter, the ANCC addressed the grievous peace agreement that was signed on November 9, 2020, by Russia, Armenia and Azerbaijan and urged Canada to go beyond just statements and take decisive action to save the Republic of Artsakh and permanently ban the destructive and irresponsible sale of arms technology to Turkey.

The letter, signed by ANCC Co-Presidents Hrag Darakdjian and Shahen Mirakian said "This disastrous agreement poses a very real threat to the long-term stability and security in the South Caucasus region. Moreover, the ramifications of this agreement will pose a significant danger to the national identity of Armenia and Artsakh, will de-stabilize Armenia's economic potential, threaten the demographic composition of the region, all the while paving the way for Turkey and Azerbaijan to continue their state-sponsored campaigns of ethnic cleansing and cultural appropriation in Artsakh and beyond."

The so-called trilateral peace agreement was signed outside the framework of the OSCE Minsk Group co-chairmanship that since 1990's has been responsible for the mediation of the conflict.

The letter also addressed the complete absence of decisive action from Canada and the rest of the international community that allowed Turkey and Azerbaijan to continue their crimes with impunity.

"The international community and Canada not only failed in condemning Turkey and Azerbaijan, but they also weren't able to sustain the internationally accepted mediation process through the OSCE Minsk Group, allowing rogue states such as Turkey to impose their will on the international community. This is the direct result of the international community's reluctance and refusal to properly condemn the aggressors and hide behind a negotiation process that they couldn't even impose." read part of the letter.

Moreover, the use of Canadian drone technology by Azerbaijan was strongly criticized, noting that without the use of such sophisticated technology, Azerbaijan would have not had the necessary strategic advantage over Armenia nor the ability to kill scores of innocent Armenians.

"Whatever the arrangements or ill-advised considerations may have been to grant these destructive exemptions, the government must come clean and realize that the Turkish Bayraktar TB2 drones, illegally transferred to Azerbaijan, equipped with their most essential feature — the WESCAM target acquisition gear — is what gave the Azerbaijani Army the advan-

*Continued on page* **E2**

# Uproar in Yerevan over deal ending Artsakh War

YEREVAN—Thousands descended on Yerevan's Freedom Square on NOvember 11 to demand the resignation of Armenian Prime Minister Nikol Pashinyan following his announcement of a trilateral agreement with Russia and Azerbaijan to end the war in Artsakh. The nine-point agreement includes the transfer of key areas of Artsakh to Azerbaijan, including Shushi and Hadrut, as well as the installation of Russian peacekeeping forces for at least five years.

"There is one primary obstacle to save Artsakh, and his name is Nikol," exclaimed Armenian Revolutionary Federation (ARF) Supreme Body representative Ishkhan Saghatelyan during the opposition rally, which progressed to the government building and then the National Assembly. "The war was brought about by Nikol as a result of his inconsistent policies. He has destroyed our relations with our military allies, Russia and Iran," continued Saghatelyan, who along with Gegham Manukyan of Yerkir Media, was detained by the Armenian National Security Service (NSS) the same evening.

The ARF, which is in the process of creating and establishing a "committee to save the homeland," was one of 17 political parties that issued a joint statement on November 9 calling for the voluntary resignation of the Pashinyan administration and the urgent creation of a new executive body to resolve this current political and military situation. The joint statement was made public just hours before PM Pashinyan announced the ceasefire agreement in a late night Facebook post, which almost instantly compelled angry mobs to storm Yerevan's government buildings, calling him a "traitor."

ARF leaders also met with Armenian President Armen Sarkissian on Nov. 10 after it was revealed that he learned about the ceasefire agreement from the press. President Sarkissian described the conflict as a "matter of national significance." In a statement, the President emphasized that "the fate of Artsakh, and consequently of the Armenian people, can be resolved only taking into account our national interests and only on the basis of a national consensus."

## A Mari Usque Ad Mare

### A NEW REFUNDABLE TAX CREDIT TO HELP CANADIANS FURTHER THEIR CAREER GOALS.

There is a budget item proposed by the Canadian federal government, that of an investment of more than $1.7 billion over the next five years, to help workers reduce the cost of classes, courses and training, that support their career goals. This refundable tax credit is called the Canadian Training Credit, this will be available for every Canadian between the ages of 26 to 65. This credit can be used to pay for eligible tuition fees and training courses taken, starting in 2020 and the subsequent taxation year.

Starting in 2019, any person that is eligible will start to accumulate $250 in each tax year, provided that individual satisfies all the conditions. This will accumulate up to a maximum of $5000 in a lifetime of an individual. The individual will be able to put forth up to 50% tax credit of the eligible tuition and fee paid in that year, provided they have that they have that amount in credits available and meet the requirements. The Canada training credit claimed on your income tax and benefit return will reduce your tax owing. If the credit is more than your tax owing, you will get a refund for the difference.

An eligible educational institution that will qualify you, for the purpose of calculating the Canada training credit, will be: a university, college or other educational institution in Canada that are providing courses at a post-secondary level; or an institution in Canada that is providing occupational-skills courses that is certified by the Minister of Employment and Social Development.

### ONTARIO COMMITS $3 MILLION TO 2022 VALOUR GAMES

In a press conference by Premier Doug Ford and Lisa MacLeod, Minister of Heritage, Sport, Tourism and Culture Industries, the Ontario government announced its commitment of $3-millon to support the 2022 Valour Games. The Valour Games are a new national multi-sport competition, similar to the Olympics, that are hosted for wounded, ill, and injured military personnel and veterans. This funding that the government announced, will be built on the success of the 2017 Invictus Games that were held in Toronto. This will continue to show the world the athletic skills and abilities of Canada's wounded veterans.

Ontario Premier Doug Ford said, "We owe our veterans and active service members a debt of gratitude for their service to our country. The Valour Games will provide another important opportunity for Ontarians to recognize the skills and excellence of our men and women in uniform and unite our province and country at a time when it's needed most."

Minister of Heritage, Sport, Tourism and Culture Industries Lisa MacLeod said, "Canadian service members and veterans face significant challenges when returning from deployment or transitioning to civilian life. Their recovery, rehabilitation and reintegration into their communities can be greatly enhanced through the transformative power of sport. The Valour Games will be a chance to support our veterans, showcase our pride of place, promote local tourism and increase participation in adaptive sports."

Ottawa will be hosting the inaugural Valour Games in 2022 and they will be open-heartedly welcoming more than 500 competitors and family and friends from across Canada to compete. After the conclusion on the 2022 Valour Games, the games will be hosted in different Canadian cities every 2 years.

### ONTARIO FAMILIES TO RECEIVE ADDITIONAL SUPPORT AMID PANDEMIC

As many families continue to struggle with the additional expenses brought forth by the COVID-19 pandemic, the Ford government announced that there will be additional support coming very soon. Ontario families with young children will be receiving another COVID-19 cheque from the provincial government of Ontario, that was designed dot help offset the additional costs of the pandemic. According to the Ford government parents with children aged 12 and under will be able to receive a one-time cheque payment of $200 per child. Parents of children aged 21 or younger with special needs will receive a one-time cheque payment of $250.

This additional support payment is being sent out for the second time amidst the COVID-19 pandemic, money that the provincial government says would provide a "measure of relief" for all the families that have been affected, especially ones that have had outbreaks at their school, or have had to learn from home.

"We have heard from parents that new expenses to support their kid's education in this COVID-19 era are straining their pocketbooks," Ontario Finance Minister Rod Phillips said in the legislature.

The provincial government says that they will spend approximately $380-million on this second round of payments, that's an addition to the $378-million that they spent on the first round of payments, which Minister Phillips says is "money well spent." The province says that payments are due to arrive by the time Christmas rolls around.

ISHKHAN GHAZARIAN

# Baroness Cox visits Artsakh, tours destruction caused by Azeri aggression

STEPANAKERT—Caroline Cox, a member of the British House of Lords and a staunch human rights advocate, visited Artsakh on Friday to get a first hand account of the destruction and havoc caused by Azerbaijan during the 45-day war. She is the first foreign official to visit Artsakh since the signing of an agreement on Nov. 9 that ended the war, but saw the surrender of territory to Azerbaijan, including Shushi.

Baroness Cox, who has been an outspoken advocate for Artsakh since 1990 and who witnessed the carnage caused by Azerbaijan during the Maragha Massacres, had also established a namesake rehabilitation centre in Stepanakert for injured soldiers and people with disabilities.

Cox said that for many years she has been advocating for the rights of the people of Artsakh in international arenas, and during the war she had called on international organizations to ensure the protection of the rights of the people of Artsakh with practical steps.

She reiterated her support for the just struggle of the people of Artsakh—for their rights and freedoms—adding that "the international community is obliged to pay duly attention to the existing needs and problems."

Artsakh's Human Rights Defender Artak Beglaryan hosted Baroness Cox, who was accompanied by Armenia's Human Rights Defender Arman Tatoyan.

Beglaryan briefed Cox on the war crimes committed by Azerbaijani forces during the war from September 27 to November 9 and presented the results of the fact finding missions conducted during the Azerbaijani aggression.

Beglaryan said that during the course of the war his office published two interim reports on Azeri atrocities, three reports on the Azeri's inhumane treatment of Armenian POWs and bodies of killed servicemen, one report on the Azeri shelling of the Shushi Cathedral, one report on the violation of children's rights and one joint report with Tatoyan on the Azeri's use of incendiary munitions containing chemical elements.

The recorded facts were more than sufficient for international human rights organizations and generally the international community to take action to properly condemn and prevent the Azeri crimes, said Beglaryan.

Answering the questions of the delegation, Beglaryan touched upon the humanitarian disaster in Artsakh and outlined the imperative for international assistance by human rights organization, which he said are important for overcoming the crisis.

After the meeting the delegation visited several civilian buildings that were destroyed during the Azerbaijani bombardments of residential areas.

## ANCC...

continued from page E1

tage over the less sophisticatedly equipped Defense Army of Artsakh. That very advantage has now led us to today's egregious peace agreement and the effective destruction of the Republic of Artsakh." said Darakdjian and Mirakian in the letter.

In late October, the ANCC had asked the government to dispatch diplomatic staff from the Moscow Embassy to Yerevan, in order to verify the evidence first hand and conclude the investigation. Despite many attempts, no action was taken.

The ANCC urged the government to go beyond just statements and take decisive and swift action based on a number of policy suggestions that were listed in the letter.

The policy suggestions urge the government to; 1) Recognize the independence of the Republic of Artsakh to bring lasting peace and deter a second genocide of the Armenian people, 2) Enforce a permanent and unconditional ban on arms sales to Turkey and Azerbaijan in light of the irrefutable evidence that is now publicly available, 3) Publicly condemn the ongoing aggression from Turkey and Azerbaijan, 4) Establish a permanent Embassy in the Republic of Armenia, 5) Continue working with NATO allies to impose the necessary sanctions on Turkey and reconsider its membership. Apply similar sanctions on Azerbaijan, 6) Advocate for the peaceful and just settlement of the conflict within the framework of the OSCE Minsk Group co-chairmanship that recognizes and respects Artsakh's Independence and right to self-determination,

## GOVERNMENT...

continued from page E1

Armenia can result in a humanitarian crisis.

The situation is incredibly complex due to the pandemic.

The spirit of every Armenian has been shaken in all corners of the world.

Our country today is not the same country that we had on September 26. It's not even same one that we had on November 8.

We cannot ignore this reality and continue living our normal lives.

During the past couple of days, given the reality, I have held dozens of consultations with parliamentary and extra-parliamentary political forces, various non-governmental organizations and individuals. I had telephone conversations with our compatriots from various Diaspora structures.

The absolute majority of the participants in the meetings agree on one issue: the Prime Minister's resignation or termination of his powers pursuant to the Constitution and the convening of early parliamentary elections.

It is obvious that despite the end of the war, the Republic of Artsakh, the Republic of Armenia and the entire Armenian nation are entering a period of new trials in which every mistake can have catastrophic consequences.

In the current situation, the Armenian nation has not other alternative but to be united and coalesced.

At this moment, each of us, especially political figures and government officials, must demonstrate the highest level of restraint and exude responsibility, focusing all their efforts on finding ways to overcome this crisis.

In this situation, I want to appeal to law-enforcement agencies.

Today, you have a mammoth task to, first and foremost, ensure order in our country, to be strong and determined, yet, at the same time, remember that every time—on every occasion—the person in front of you is your sister or brother.

Any deviation, any violation of the law is unacceptable and unforgivable. I call on you to uphold and protect the rule of law.

My observations based on meetings and consultations are the following:

Taking into consideration the current situation and the imperative to overcome the crisis with dignity, and having heard the public's demands, it is obvious that in order to keep the country from further jolts, early Parliamentary elections will be inevitable.

To this end, in my opinion, the only responsible approach for the government and the ruling party is to assess its own internal potential objectively and, in the shortest time, present a roadmap, which will provide deadlines for initiating relevant constitutional processes, which will allow for early parliamentary elections. A highly qualified interim National Accord government will manage this process.

For the Republic of Armenia, the Republic of Artsakh and all Armenians living in different countries around the world, the aforementioned observations are aimed at overcoming the crisis in these difficult times, and exclusively stem from based on national interests.

I hope that all the political forces will realize the urgency of the moment, and will do their part to advance this historic mission with dignity.

I would like to remind you that today everyone is behind Armenia, both our friends and our enemies.

We have no other responsibility but to strengthen our country.

There is not other way but to unite all people, and not give credence to any action or statement that that threatens to divide our society.

Only through unity will we be overcome this burden of defeat, and to show ourselves, the future generations and the world that we are the children of a nation that is impossible to defeat.

I am confident that the Armenian people will emerge from the difficult situation with honor and victory.

May God bless us all.


IT'S TIME TO TOYOTA
The all-new 2020 RAV4
STARTING AT
$30,429*
The all-new 2020 COROLLA
STARTING AT
$21,159*
TOYOTA
CONTACT TOYOTA GABRIEL ST-LAURENT TO BOOK A TEST DRIVE WITH OUR ENHANCED SAFETY PROTOCOL.
TOYOTA
GABRIEL
ST-LAURENT
Sam Karadanaian, Product Consultant
Tel.: 514 748-7777, ext.: 3810
skaradanaian@toyotagabriel.com
Դիմեցէք Սէմ Քարատանայեանին
լաւագոյն սպասարկութեան համար
3333, ch. de la Côte-de-Liesse
Saint-Laurent, QC H4N 3C2
514 748-7777
toyotagabrielstlaurent.com
OPEN SATURDAYS
TOYOTA GABRIEL
ST-LAURENT


Gary(Giro)Chahinian
President, Broker of Record
THE DIAMOND REALTY
416-235-2500
The Diamond Realty Inc
4 BR PICTURE PERFECT MISSISSAUGA
$1,189,000 MLS W4884733
NEW CONDO 2+1 BR 930 SQ' + BALCONY
BAYVIEW VILLAGE $788,888
Gary(Giro)Chahinian
President, Broker of Record
416-258-8892
Gabriel Chahinian
Broker
647-580-5818
INVESTMENT PROPERTY 97 ORIOLE PKWY/AVENUE ROAD
ACROSS FROM UCC $2,300,000 - MLS C4875042
KING/BATHURST DOWNTOWN 1+1 BR $548,800 - MLS C4965924
ISLINGTON/DIXON 3 BR FULLY RENO'D $419,900 - MLS W4926002
